ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Սարգսյան Արմեն

Զարգարյան Երջանիկ

Սարգսյան Մերի

Հարությունյան Արուսյակ

Պապիկյան Անժելա

Սեդրակյան Արտյոմ

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Սարգսյան Արմեն - ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Զարգարյան Երջանիկ – ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն

Սարգսյան Մերի - ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական քարտուղար

Հարությունյան Արուսյակ - ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ

Պապիկյան Անժելա - ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Սեդրակայն Արտյոմ - ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ իրավագիտության ամբիոնի դասախոս, դոցենտ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Տուշայի համալսարան

23.05.2022 – 27.05.2022

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Տուշայի համալսարան, Իտալիա

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում «Աշխատակազմի վերապատրաստման միջազգային շաբաթ»-ին մասնակցություն,

2. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Իտալիայի Տուշայի համալսարանի հետ կրկնակի դիպլոմի մագիստրոսական կրթական նոր ծրագիր սկսելու հարցը՝ «Անվտանգություն և մարդու իրավունքներ» մասնագիտացմամբ,

3. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի 2022 թ. մայիսի 16-ի նիստի որոշմամբ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հետ երկարատև և արգասավոր համագործակցության համար իտալացի գիտնական Նիկոլո Մերենդինոյին «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պատվավոր դոկտորի» կոչում շնորհելու հարցը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Տուշայի համալսարանի միջազգայնացման քաղաքականությունը և առաջավոր փորձի կիրառումը և տեղայնացումը

2. Աշխատակազմի գործունեությունը և կայունությունը միջազգային և միջպետական հարաբերություններում

3. Մագիստրոսական կրթական ծրագրերի կրկնակի և համատեղ դիպլոմների իրականացման հնարավորություններ

4. Տուշայի համալսարանի Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող կարողությունների զարգացման նախագծերի ներկայացում՝ MENVIPRO

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակության ներկայացուցիչները՝ տնօրենի գլխավորությամբ, հանդիպել են Իտալիայի Տուշայի համալսարանի ռեկտոր Ուբերտինիի, արտաքին կապերի գծով պրոռեկտոր Սևերինիի, պրոֆեսոր

Մերենդինոյի, արտաքին կապերի բաժնի աշխատակիցների, միջազգայնացման ծրագրերի համակարգողների, իրավագիտության ամբիոնի վարիչի հետ: Գործընկերները քննարկել են առաջիկա ծրագրերը, մշակել աշխատանքային պլան: ԳԿՄԿ պատվիրակությունը շրջայց է կատարել համալսարանական որոշ ենթակառուցվածքներում, ծանոթացել համալսարանի նյութատեխնիկական հնարավորություններին:

Գործընկեր կազմակերպության ներկայացուցիչները քննարկել են առաջիկա անելիքները՝ կապված համատեղ կրթական ծրագրեր ներդնելու, կրթական ծրագրերի բենչմարքինգի, սեմինարների, դասախոսությունների, գիտական նախագծերի իրականացման հետ և այլն:
Քննարկվել են նաև գիտության ոլորտում համագործակցության հնարավորություններն ու խնդիրները: Համատեղ ծրագրերի իրականացումը կնպաստի նաև գիտության զարգացմանը և կմեծացնի ուսանողների հետաքրքրվածությունը գիտությամբ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ամրապնդվեցին երկու բուհերի համագործակցային և բարեկամական կապերը, արդեն իսկ ձևավորված գործընկերային հաջողված փորձը նոր բարձունքի հասավ, «Մարդու իրավունքներ և անվտանգություն» մասնագիտացմամբ կրկնակի դիպլոմի ծրագրի շուրջ առարկայական քննարկումներ իրականացվեցին, որոշվեց ծրագրի դասընթացի բովանդակությունը և ձևաչափը, որի հիման վրա կկատարվի ՄԿԾ -երի համապատասխանեցում և կրթական ծրագրի ներդրում:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

30.05.2022

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ